


ԳԻՏԱ-ՄԱՍՍԱՅԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ



Հ. Կ. ԳՐԱԴԱՐԱՆ

ԲԱՄԲԱԿԵԼՈՒ ՀՈՂԻ
ՆԱԽԱՑԱՆՔՎՅՈՒՆ
ՄՏԱԿՈՒԹՅՈՒՆԸ



ՀԱՅԱՍՏԱՆԻ

КНИГА ДОЛЖНА БЫТЬ
ВОЗВРАЩЕНА НЕ ПОЗДНЕЕ
УКАЗАННОГО ЗДЕСЬ СРОКА

631.4:63 | 3.51 | 10988
4-95 | Григорий, З.И.
Сибирь и тундр
... 501.

Зак. 32

ԱՍՏՈՐ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ
ԳԻՏԱԿԵՑՈՂՈՏԱԿԱՆ ԻՆՍԻՏՈՒՏ

633.51 : 631.51

գ-95

Հ. Ա. ԳՐԵԳՈՐՅԱՆ
(Դյուռդ. գիտ. քեկնածու)

ԱՆՁԻՉԱՆ Է 1961 թ.

ԲԱՄԲԱԿԵՆՈՒ ՀՈՂԻ
ՆԱԽԱՑԱՆՔԱՑԻ
ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ

40288

A 17693



Հ Ա Յ Պ Ե Տ Հ Ր Ա Տ
ԵՐԵՎԱՆ 1947

Г. К. ГРИГОРЯН

ПРЕДПОСЕВНАЯ ОБРАБОТКА

ПОЧВЫ ПОД ХЛОПЧАТНИК

(На армянском языке)

Армгиз, Ереван, 1947

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվության բարձրացման գործում խոշոր նշանակություն ունեն բարձր որակով և ժամանակին կատարվող նախացանքային աշխատանքները։ Նախացանքային ճիշտ մշակությամբ է պայմանավորված նաև հետագա մշակման աշխատանքների բնույթը, որակը և էֆեկտը։

Նախացանքային աշխատանքների կատարման ժամանակը և որակը նույնպես կարենոր նշանակություն ունեն հողի լավագույն վիճակ ստեղծելու և այն պահպանելու համար։

Բացի խոտադաշտային ցանքաջոշանառությունների կիրառումից հողի լավագույն վիճակ ստեղծելու և այլ վիճակը երկարատև պահելու համար անհրաժեշտ է կիրառել նաև հողի աշնանային և գարնանային մշակման սիստեմները։

Հողի մշակման ցրտահերկի սիստեմ չկիրառելու դեպքում գարնանը կատարվող նախացանքային մշակությունը միշտ տալիս է ցածր էֆեկտ։ Հողի մշակման ցրտահերկի սիստեմի բացակայությունը ադրբեյխնիկական կոմպլեքսի ամենակարենոր օղակներից մեկի խախտումն է։

Հողի մշակման նախացանքային սիստեմ կիրառելիս հողակլիմայական տարբեր պայմաններում պետք է ունենալ տարբեր մոտեցում՝ հաշվի առնելով յուրաքանչյուր վայրի հողի վիճակն ու առանձնահատկությունները, մոլախոտերության նրա վարակվածության աստիճանը, նախորդները և այլն։

Այդ կապակցությամբ, Միջին Ասիայի և Անդրկովկասի գիտահետազոտական հիմնարկները վերջին տարիները զբաղվում են հողի նախացանքային մշակության ձևերի ուսումնասիրության հարցերով։ Տեխնիկական կուլտուրաների հայկական գիտահետազոտական ինստիտուտի ագրոտեխնիկայի բաժինը 1940 թվից սկսած

նույնպես ուսումնասիրում է այդ հարցը՝ Արարատյան դաշտավայրի պայմաններում:

1941-ի և 1942 թ. թ. աշնանը վարը կատարվել է նախագութանիկ ունեցող գութանով: Փորձը զրվել է եջմիածնում զորշագանակագույն հողային տիպի վրա:

Հաջորդ տարվա դարնանը այդ փոնի վրա փորձարկվել են հետեւալ վարիանտները.

1. Քարշակում (գլուզգլովկա),
2. Փոցիում (զիրզագույլ),
3. Փիրեցում կուլտիվատորով 10—12 սմ խորությամբ և փոցիում,

4. Չիգելացում և փոցիում,

5. Կրկնավար և փոցիում,

6. Կրկնավար, չիգելացում և փոցիում:

Փորձը զրվել է 4 կրկնողությամբ: Միջշարքային տարածությունը եղել է 70 սմ, իսկ միջբնայինը՝ 20 սմ, յուրաքանչյուր բնում թողնվել է մեկական բույս:

Աշնանավարը կատարվել է նոյեմբերի 20-ին 23—25 սմ խորությամբ, քարշակումը՝ 12/IV, կրկնավարը՝ 30/IV, չիգելացումը՝ 3/V և ցանքը՝ 5/V-ին:

Մինչև բերքահավաքը բամբակենուն տրվել է 7 զուր և 5 քաղցան, կուլտիվացիա:

Բացի բերքատվության հաշվառումից, վեգետացիայի ընթացքում ուսումնասիրվել է նաև Հողի նախացանքային մշակության տարրեր ձեռքի աղղեցությունը նրա ստրուկտուրայի և սննդանյութերի կուտակման վրա:

1. ՀՕՂԻ ԽՈՆԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԴԻՆԱՄԻԿԱՆ

Հողի խոնավության դինամիկայի ուսումնասիրությունը վեգետացիայի ընթացքում կատարվել է կոկոնակալման և ծաղկման ֆազաներում՝ յուրաքանչյուր անգամ վեգետացիոն շրից առաջ և հետո: Նմուշներ վերցվել են Հողի 0—20 սմ և 20—40 սմ շերտերից: Ստացված տվյալները բերվում են 1-ին ազլուսակում:

Դարիանում-	Շերտի խոռ-	Կոկոնակալման ժաման	Շաղկման ժաման	Փակում	
ներ	բությունը սմ.	ջրելուց առաջ 19/VI	ջրելուց հետո 24/VI	ջրելուց առաջ 18/VII	ջրելուց հետո 23/VII
Քարշակում	0—20	15,5	16,6	9,0	18,4
	20—40	18,5	19,6	12,0	18,4
Ջրելացում կ փողխում	0—20	13,8	16,1	10,8	18,2
	20—40	18,5	19,9	12,5	18,5
Կրկնավար կ փողխում	0—20	13,9	16,1	8,5	19,2
	20—40	17,4	18,3	11,6	18,9

Ամառի տաք և չոր եղանակներին, բարձր ջերմության ազդեցության տակ, հողի խոնավությունը, ինչպես ցուցում է տրված աղյուսակում, ջրելու նախօրյակին հասնում է մինիմումի և գգալի չափով բարձրանում է ջրելուց հետո:

0—20 սմ շերտի խոնավությունը 20—40 սմ շերտի խոնավությունից անհամեմատ ցածր է, դա բացատրվում է ջրի ուժեղ գուրշիցմամբ հողի վերին շերտից, հատկապես հողիս և օգոստոսի ամիսներին:

Կրկնավարի գեպքում, ինչպես հողի առանձին շերտերում, այնպես էլ ամբողջ 0—40 սմ շերտում, խոնավությունը 1—20/սու ցածր է համեմատած քարշակով մշակված հողամասի խոնավության հետ: Դա բացատրվում է նրանով, որ կրկնավարի հողն ավելի խոր է մշակվում, հետևապես մեծանում է նրա գուրշիցմանը:

Հողի խոնավության տարբերությունը վեգետացիայի ընթացքում կատարվող ոռոգումների զնորհիվ հարթվում է: Նույն խնդրի ուսումնասիրությամբ զբաղվել են՝ Միջին Ասիայի և Արքեղանի քամբակագործական գիտա-հետազոտական հիմնարկները: Այդ ուսումնասիրությունների արդյունքները համընկնում են մեր

ուսումնասիրությունների արդյունքներին: №2 աղյուսակում բերում ենք Ղազախստանի փորձնական կայանի տվյալները, որոնք ստացվել են 1939 թ.:

Հողի խոհավորթյունը $0/0$ 0-ում

Աղյուսակ 2

Դ. ա ր ի ա ն ա	Շերտի խորությունը սմ.		
	0-10	10-20	20-100
Աշնան վար 25 սմ հ փլարեցում էկստիբատուրով	16,6	17,8	18,1
Աշնան վար 25 սմ. հ երկու վար գարնանը	11,1	17,7	18,0

Կրկնավարի դեպքում խոնավության կորուստը մեծ նշանակություն կարող է ունենալ լեռնային և նախալեռնային անչըրզի պայմաններում, իսկ ոսովվող շրջաններում, որտեղ մշակվում է բամբակենին, այդ հանգամանքը վճռական նշանակություն ունենալ չի կարող:

2. ՀՈՂԻ ՍԳԲԵԳԱԾ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

Բամբակենու ծլման և հասունացման ֆազերում հողի աղբեկատիկամության որոշման նպատակով նմուշներ վեցցվել են 0—40 սմ խորությունից:

№ 3 աղյուսակում զետեղված են հողի աղբեկատ կազմության որոշման երկու տարիվա տվյալները:

Հարիանստ	Շերտի խորու- թյունը մմ.	Ֆրակցիաների մեծությունը մմ.				Կայուն ստրուկտու- րային հա- տիկների գումարը 0/0 0/0-ով
		5-3	3-1	1-0,25	<0,25	
Բարձակում	0-40	0,53	6,25	30,11	63,14	36,89
Զիգելացում	0-40	1,52	6,48	30,67	61,33	38,67
Կրկնավար	0-40	0,41	5,93	30,67	62,99	37,01

Աշնանավարի գարնանային նախացանքային մշակության տարրեր եղանակները հողի ազբեզատ կազմության վրա զգալի ազդեցություն չեն թողնում:

Մեխանիկական ներգործումների հաճախակի կրկնությունը, ինչպես հայտնի է գրականությունից, առաջ է բերում հողի ստրոկտորայի քայլքում (փոշիացում):

Մեր ուսումնասիրություններից պարզվում է, որ գարնանը հողի հասուն ժամանակ (քեցին) կրկնավար չստացած դաշտի համեմատությամբ մեկ անգամ կրկնավար կատարված դաշտում հողի ստրոկտորային վիճակը առանձին տարրերություն չի տալիս, իսկ եթե գարնանը կրկնավարը կատարվում է մի քանի անգամ՝ հողն ավելի շատ է փոշիանում, առանձնապես, եթե այդ աշխատանքը կատարվում է հողի համեմատաբար չոր վիճակում:

Հաճախակի կրկնավարը, բացի հողի փոշիացում առաջացնելուց, պնդացնում է նաև նրա ենթավարելաշերտը, որը բացասական ազդեցություն է թողնում բամբակենու աճման ու զարգացման վրա:

ՅԻՏՐԱԾՆԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ

Արարատյան դաշտավայրի հողակլիմայական պայմաններում նիտրատները կազմում են բամբակենու աղոտային սննդի

պլիսավոր ազգյուրը, մանավանդ, որ հողում եղած ամիակը արագորեն վերածվում է նիտրատների: Նիտրատների դինամիկայի ուսումնասիրությունը մենք կատարել ենք բամբակենու ծլման, կոկոնակալման և հասունացման ֆազերում, հողի նմուշները վերցրել ենք 0—20 սմ և 20—40 սմ խորությամբ:

Մտացված տվյալները դեռեղված են № 4 աղյուսակում:

Նիտրատների բանակը բացարձակ չոր հողում միկրոբամներով.

Աղյուսակ №

Վարչականություն	Ենորությունը սմ.	1 9 4 1 թ.			1 9 4 2 թ.		
		16/V	7/VII	26/IX	19/IV	18/VII	3/X
		0—20	48,1 33,1	41,2 39,1	51,5 19,4	25,6 23,1	28,1 28,1
Քարշակում	20—40						
Զիզելացում և փողխում	0—20	51,1 46,5	57,8 28,3	— 53,9	31,4 25,8	44,1 31,1	6,8 6,6
Կրկնավար չեզելացում	20—40						
և փողխում	0—20	57,8	65,6	70,9	30,1	38,5	7,0
	20—40	46,6	50,7	64,7	27,6	40,2	7,0

1941 թվի տվյալներով հողում նիտրատների մաքսիմում բանակությունը նկատվում է բամբակենու հասունացման ժամանակ, իսկ 1942 թ. ծաղկման ֆազում: Նիտրատների մինիմումը բանակությունը 1941 թ. նկատվել է գարնանը, այնինչ 1942 թ. այդ տեղի է ունեցել բամբակենու հասունացման ժամանակ:

Նիտրատների բանակը 0—20 սմ շերտում անհամեմատ ավելի շատ է, քան 20—40 սմ շերտում:

Ամբողջ վեգետացիայի ընթացքում նիտրատների քանակն անհամեմատ ավելի շատ է փորձի այն վարիանտում, որտեղ գարնանը կատարվել է խոր փիտրեցում (կրկնավար, չիզելացում): Այդ օրինաչափությունը նկատվում է մեր երկու տարվա ուսումնասիրություններում: Այդ հանգամանքը բացատրվում է միկրո-

բիոլոգիական պրոցեսների ինտենսիվությամբ, որի հետևանքով նիտրատների քանակը զգալիորեն ավելանում է խոր փլարեցրած հողում:

Նիտրատների կուտակման կորագիծը, ըստ առանձին վարանտների, ընկնում է հետևյալ հաջորդականությամբ՝ կրկնավար չիգելացում և փոցխում, շիզելացում և փոցխում, քարշակում:

Այն վարիանտում, որտեղ կատարված է կրկնավար և չիգելացում, ստեղծվում են բույսերի համար ազուտական սննդի ավելի նպաստավոր պայմաններ, քան մյուս վարիանտներում:

4. ՄՈԼԱԽՈՏԵՐԻ ՀԱՇՎԱԲՈՒԽՄԸ

Հայկական ՍՍՌ-ի բամբակացան շրջաններում ցանքերը վարակված են մեծ քանակությամբ մոլախոտերով, որոնց թի՛ քարակային և թի՛ տեսակային կազմը պայմանավորված է նաև հողի նախացանքային մշակության նղանակներով:

Մեր ուսումնասիրությունների ընթացքում հատուկ ուշադրություն ենք դարձել ծարմատավոր և կոճղարմատավոր մոլախոտերի վրա, որոնք մեծ շափով տարածված են բամբակացան շըրշաններում և մեծ վնաս են պատճառում:

Մեր ուսումնասիրությունների ժամանակ հաշվի է առնվել նախացանքային մշակության տարրեր եղանակների ազգեցությունը մոլախոտերի դեմ պայքարելու առումով:

Հաշվառումները բոլոր վարիանտներում կատարվել են նախանագահին քաղաքանն ու փիբրեցումը:

№ 5 աղյուսակում ցույց է տրված մոլախոտերի հաշվառման տվյալների միջինը:

Աղյուսակ 5

Մոլախոտերի բանակը մեկ բանակուսի մետրում:

Ա լ/կ	Վարիանտ	1941 թ.	1942 թ.
1	Բարձակում	8,4	10,8
2	Փացիսկում	—	12,6
3	Փլարեցում կուտիվատություն	—	4,5
4	Զեղեցում	—	6,4
5	Կընավար և չիգելացում	4,6	3,6
6	Կրկնավար և չիգելացում	—	1,0

Աղջուսակի տվյալները ցուց են տալիս, որ հինգերորդ (կըրկնավարած) և վեցերորդ (կրկնավար+չիպելացում) վարիանտների փորձամարգերում անհամեմատ ավելի քիչ մոլախոտեր կան, քան այլ վարիանտների փորձամարգերում:

1941 թվականին Միջին Ասիայում նույնանման տվյալներ ստացել է Ռւստինովիչը Հողի նախացանքային մշակության տարբեր եղանակների փորձարկումից:

Հստ Ռւստինովիչի, նախան ցանքը Հողի մշակումը էկզումիրավորով և քարշակով կամ փոցխով կատարելը մոլախոտերի դեմ պայքարելու հուսալի միջոց չէ:

Աղրեհանում էդ. Վարոնցյանի փորձերից նույնպես պարզ վել է, որ կրկնավարը շատ մեծ շափով օկնում է պայքարելու մոլախոտերի դեմ:

1942 թվի տվյալներից երեսում է, որ կրկնավարի և չիպելի կոմբինացված օգտագործումը մոլախոտերի դեմ պայքարելու ամենաէֆեկտավոր միջոցներից մեկն է:

5. ՖԵՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԴԻՑՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ

Բամբակինու վրա ֆենոլոգիական դիտողություններ կատարվել են նրանց ծալման, ծաղկման և հասունացման ֆազերում:

Հ 6 աղյուսակում զետեղված են այդ դիտողությունների միջին տվյալները:

Աղյուսակ 6

Ֆենոլոգիական դիտողությունների արդյունքները:

Դ. ա ր ի ա ն ա տ	Օրերի թիվը տանքից մինչև		
	ծիկլը (50 %)	ծաղկելը (50 %)	հասունացումը (50 %)
Ք ա ր շ ա կ ո ւ մ	8	76	125
Զ ի դ ե լ ա ց ու մ	8	73	125
Կ ր կ ն ա վ ա ր	8	73	122
Կրկնավար և չիպելացում	8	71	120

Ստացված տվյալներից պարզվում է, որ աշնանավարի գարնանային քարչակումը, համեմատած կրկնավարի հետ, ուղացնում է բամբակենու հասունացումը 3—5 օրով:

Միջին Ասիայի կենտրոնական գյուղատնտեսական մեքենաների փորձարկման կայանի գիտական աշխատակիցներ Աֆինոգինովը և Տիրինան 1940 թվին իրենց փորձերում նկատել են ծլման և ծաղկման ֆազերի նույնպիսի ուշացում:

Մեզ մոտ ծլման ֆազի նկատմամբ այդպիսի տարբերություն չի նկատվել:

Արարատյան գաշտավայրի պայմաններում, ուր աշնան առաջին ցրտահարությունը անհամեմատ ավելի վաղ է լինում, քան մյուս ռեսպուբիկաների բամբակագործական շրջաններում (Միջին Ասիայում և Ագրբեշանում), մեծ ուշադրություն պետք է դարձնել բամբակենու հասունացման ֆազի արագացման վրա՝ նաև հողի նախացանքային լավագույն եղանակների կիրառման միջոցով: Համաձայն մեր փորձերի՝ գարնանային կրկնավարը, նախացանքային մշակության այլ եղանակների համեմատությամբ, ավելի մեծ չափով արագացնում է բամբակենու հասունացումը:

6. ԲԵՐՔԱԾՎՈՒԹՅՈՒՆԸ

Բամբակենու բերքատվության հաշվառումը ցույց է տրվում 7-րդ աղյուսակում:

Հողի նախացանքային մշակման արարեր եղանակների ազդեցությունը բամբակենու բերքի վրա (ց[5]).

Աղյուսակ 7

Դ. ա բ ի տ ն տ	1941 թ.	1942 թ.	Երկու տարվա միջինը	
			ցենտներ հեկտարի հեկտարից	տատանում
Քարշակում	25,6	23,8	24,7	—
Փոցիսում	—	23,5	—	—
Փլուբեցում կուլտիվատո-				
բով	—	21,4	—	—
Զբուղացում	26,0	25,2	25,6	+0,9
Կրկնավար	27,2	27,0	27,1	+2,4
Կրկնավար և չիպելացում	27,5	27,0	27,3	+2,6

Աղջուասակում բերած տվյալներն ամբողջապես համապատաք-
խանում են ագրոֆիմիական և ագրոֆիզիկական ուսումնասիրու-
թյուններից ստացված տվյալներին: Բամբակինու համեմատաբար
բարձր բերք ստացվել է այն վարիանտում, որտեղ գարնանը կա-
տարվել է կրկնավարի:

Գարնան կրկնավարից հետո չիզել գործադրումը բերքը չե-
բարձրացնում:

Գարնանը հողի հասուն ժամանակ (Քեշին) չիզելով կատա-
րած խորը փիսրեցումը բռնում է կրկնավարի և քարշակման մի-
ջին տեղը: Մեր երկամյա փորձերից պարզվում է, որ Հայաստա-
նի բամբակագործական շրջաններում նախագութանիկով կատա-
րած աշնանավարը, ծլաշրի լայն կիրառման պայմաններում, գար-
նանը անհրաժեշտ է կրկնավարել, որով բամբակինու բերքատվու-
թյունը բարձրանում է 2,0—3,5 գ/հ, համեմատած քարշական վա-
րիանտի հետ:

Սկսած 1939 թվից՝ Միջին Ասիայում հողի նախացանքային
մշակության տարբեր եղանակները փորձարկվել են 60—80 կե-
տերում, հողի տարբեր խոնավության պայմաններում: Այդ ուսում-
նասիրությունները տարվել են 1. մինուրտային տեղումներով
սակավ վայրերում, որտեղ ոռոգումն անհրաժեշտ է բամբակինու
սերմերի նորմալ ծլման համար և 2. մինուրտային տեղումնե-
րով ապահովված վայրերում կամ այնպիսի հողերում, որտեղ
ստորերկրյա շրջերը մոտ են վարելաշերտին և սերմերի նորմալ
ծլման համար ոռոգումն անհրաժեշտ չեն:

Ինչպես հայտնի է Ասիանոգենովի և Տիրինայի ուսումնասի-
րություններից, որոնք կատարվել են մինուրտային տեղումներով
սակավ վայրերում, քարշակած և էկստրիպատորով փիսրեցրած
վարիանտներում բամբակինու տալիս է 3.8 գ/հ պակաս բերք,
քան կրկնավարած վարիանտում:

Դապահատանի բամբակագործական կայանում ոճումնասի-
րությունները տարվել են «զինա» հողերում: Քարշակած ու էկս-
տրիպատորած վարիանտներում ստացվել է 11 %ուղղ քարձր բերք՝
կրկնավարած վարիանտի համեմատությամբ: Դրա պատճենն այն
է, որ կրկնավարը նպաստում է հողի խոնավության կորստին:

Այս դեպքերում հողում եղած խոնավությունը չի բավականացնում բամբակենու սերմերի նորմալ ծրման համար, որը և բացասաբան է ազգում բամբակենու հետագա զարգացման վրա:

Հակառակ պատկեր է ստացվել Ադրբեջանի Բամբակագործական-գիտահետազոտական ինստիտուտում, որտեղ աշնանավարը գարնանը կրկնավարելիս բերքատվությունը բարձրացել է 5—9 %-ով:

Ե Զ Բ Ա Յ Ց ՈՒԹ Յ Ց ՈՒՆ

1. Կրկնավար կատարած վարիանտում խոնավության քանակն ավելի քիչ է քարշակած վարիանտի խոնավությունից, թեև այդ տարբերությունն արտահայտվում է 1—2 %-ով:

Այդ հանգամանքը կարեոր նշանակություն ունի լեռնալին անջրդի հողերի համար, որտեղ մշակվող կուլտուրայի բերքատվությունը կախված է հողում նախօրոք կուտակված խոնավության քանակից և ոչ թե ոռոգումից:

ՀՍՍՌ բամբակագործական շրջաններում, որտեղ արաթի վրա կատարվող ցանքը լայն արտադրական բնույթ չի ստացել, նախօր ցանքը հողի մեջ կուտակված խոնավությունը վճռական նշանակություն չի կարող ունենալ:

2. Նախացանքային մշակության տարբեր եղանակները, այն է քարշակումը, շիզելացումը, կրկնավարը հողի ստրոկտուրայի փոփոխությունների վրա ազդելու տեսակետից զգալի տարբերություն չեն տալիս:

3. Վեգետացիալի ընթացքում նիտրատների քանակը հողում շատ է զարնանը խորը կրկնավարած վարիանտում, որովհետեւ այդ դեպքում միկրոբուզդակական պրոցեսներն ընթանում են լավագույն պայմաններում, որի շնորհիվ բամբակենու համար ազոտացին սննդի ավելի բարենպաստ միջավայր է ստեղծվում:

4. Մոլախոտերի դեմ հաջող պայքարելու միջոցառումներից մեկն էլ աշնանավարի գարնանալին խոր կրկնավարն է, որի դեպքում մոլախոտերի քանակը հասնում է մինիմումի:

5. Արարատյան դաշտավայրի հողակլիմայական պայմաններում, համեմատած բարշակած պամփանտի հետ, խոր կրկնա-



վարած վարիանտում բամբակենու հասունացումը տեղի է ունենում 3—5 օր ավելի շուտ:

6. Հայաստանի բամբակագործական շրջաններում նախագութանիկով աշնանը վարած հողերում, ծլաջրի լայն կիրառման պայմաններում, գարնանը անհրաժեշտ է կատարել խոր կրկնավար, որը, համեմատած քարշակած վարիանտի հետ, բամբակենու բերքատվությունը բարձրացնում է 2,0—3,5 ց/հ: Կրկնավար ստացած հողերում միզելացումը բերքի բարձրացմանը չի նպաստում:




ՅՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն	Տ
Հոգի խոնավության դինամիկան	4
Հոգի ազրեցատ կազմությունը	6
Նիտրատների դինամիկան	7
Մոլախոտերի հաշվառումը	9
Ֆենոլոգիական դիտողությունների տվյալները	10
Բերքատվություննը	11
Եղբակացություն	13

Պատ. խմբագիր՝ Պետք. Գ. Ա.Ա.ԶԱՆՅԱՆ
Տեխ. խմբագիր՝ Ի. Վ.Ս.ԹԱՆՅԱՆ

Վ.Ֆ. ՕԺ961. Պատվեր № 376 տիրաժ 2000, տպ. 0,75 մ.
Հեղ 0,5 մամ. Հանձնված է արտադրության 23/VII 47 թ.
Ստորագրված է տպագրության 20/VIII 1947 թ.

Հայոցեանքատի տպարան, Երևան Լենինի փող. № 65



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0009235

ԳԻՒԾ 50 ԿՈՊ.

43

A 17693

17693